Գ Ո Ր Ծ Ո Ւ Ղ Մ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գործուղվողի անուն, ազգանուն Եգանյան Գագիկ

Զբաղեցրած պաշտոնը ՀՀ ՏԿԶՆ Միգրացիոն պետական ծառայության պետ

Գործուղման վայրը ք. Մոսկվա /Ռուսաստանի Դաշնություն/

Գործուղման ժամկետը 2017 թ. սեպտեմբերի 25-ից 28-ը

Գործուղման նպատակը - Մասնակցություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ կոլեգիային առընթեր միգրացիոն հարցերով խորհրդատվական կոմիտեի 5-րդ նիստին և դրան նախորդող միգրացիոն հարցերով աշխատանքային խմբի հանդիպմանը:

Գործուղման ընթացքում կայացած հանդիպումները – Սեպտեմբերի 26-ին կայացավ աշխատանքային խմբի հանդիպումը, որը նախագահում էր ԵՏՀ-ի աշխատանքային միգրացիայի և սոցիալական պաշտպանության դեպարտամենտի տնօրեն տիկ. Պ.Սույումբաեվան: Հանդիպման օրակարգում ընդգրկված էին 3 հարցեր, որոնց վերաբերյալ ԵԱՏՄ անդամ բոլոր պետությունների իրավասու պետական մարմինները, այդ թվում և մեր ծառայությունը խիստ վերապահումներ ունեին: Մանրամասն քննարկումների արդյունքում հնարավոր եղավ գտնել բոլորի համար ընդունելի տարբերակներ, որոնք և ներկայացվեցին խորհրդատվական կոմիտեի նիստին:

Խորհրդատվական կոմիտեի բուն նիստը տեղի ունեցավ սեպտեմբերի 27-ին և օրակարգում ընդգրկված էին 11 հարցեր: Նիստը վարում էր խորհրդատվական կոմիտեի նախագահ, էկոնոմիկայի և ֆինանսական քաղաքականության հարցերով ԵՏՀ կոլեգիայի անդամ, նախարար պր.Տ.Ժակսիլիկովը: Օրակարգի առանձին հարցերի վերաբերյալ, որոնք որ առնչվում էին ՀՀ-ին և մասնավորապես մեր ծառայությանը, ներկայացրել եմ մեր դիրքորոշումները: Մասնավորապես 6-րդ հարցի շրջանակներում ներկայացրել եմ առաջարկներ՝ ԵԱՏՄ պայմանագրում լրացումներ կատարելու վերաբերյալ:

Օրակարգի 7-րդ հարցի առնչությամբ ներկայացրել եմ, որ ՌԴ-ում մեր դեսպանության տրամադրած տեղեկությունների համաձայն ՌԴ առանձին սուբյեկտներում /Խանտի Մանսիյսկ, Կաբադինո-Բալկարիա, Դաղեստան/ չեն պահպանվում ԵԱՏՄ պայմանագրի 7-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված 30-օրյա ժամկետում ԵԱՏՄ անդամ պետությունների, այդ թվում ՀՀ քաղաքացիների հաշվառման կանգնելուց ազատված լինելը: Այդ առնչությամբ նիստին մասնակցող ՌԴ ՆԳ նախարարության միգրացիայի հարցերով գլխավոր վարչության պետի տեղակալ պր. Դ.Դեմիդենկոն տեղեկացրեց, որ այդ հարցը բարձրացվել էր նաև ՌԴ-ում ՀՀ դեսպան պր. Վ.Տողանյանի ՌԴ ՆԳՆ միգրացիայի հարցերով գլխավոր վարչության պետ տիկ. Օ Կիրիլովայի հետ ս/թ սեպտեմբերի 21-ին տեղի ունեցած աշխատանքային հանդիպման ընթացքում և իրենք արդեն իսկ քայլեր են ձեռնարկում իրավիճակը շտկելու նպատակով:

Օրակարգի 10-րդ հարցը վերաբերում էր խորհրդատվական կոմիտեի հաջորդ՝ 6-րդ նիստի անցկացման վայրին և ժամանակին: Նախարար պր. Տ.Ժակսիլիկովը առաջարկեց, որ քննության առնվի նիստը Երևանում անցկացնելու հարցը՝ հաշվի առնելով, որ ԵԱՏՄ բոլոր անդամ պետություններում արդեն իսկ նիստ անցկացնելու հանգամանքը: Այն կկայանա 2018 թ. առաջին կիսամյակում:

Այլ հարցեր- Գործուղման ընթացքում ինձ հանձնվեց ԵՏՀ էկոնոմիկայի և ֆինանսական հարցերով կոլեգիայի անդամ, նախարար /նախկին/ պր. Տ.Սուլեյմանովի շնորհավորական ուղերձը՝ ծննդյան տարեդարձի կապակցությամբ:

Գործուղվող ***Գ. Եգանյան***